# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մայիսի 2023 թվականի N 764-Ն

## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 3-րդ և 57-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին՝

1) սույն որոշման հավելվածի 1-6-րդ կետերում նշված կազմակերպությունների հետ կնքված գնման պայմանագրերում փոփոխություններ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցների շրջանակներում կնքել համաձայնագրեր՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված ապահովումների փոխարինման և պատվիրատուին ներկայացման տասնհինգ աշխատանքային օրվա ժամկետի պահանջը.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո սույն որոշման հավելվածի 7-9-րդ կետերում նշված կազմակերպություններին երեք աշխատանքային օրվա ընթացքում

ծանուցել համաձայնագիր կնքելու մասին՝ ապահովումների փոխարինման և դրանք պատվիրատուին ներկայացնելու ժամկետ սահմանելով համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օր:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահին՝ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետում կազմակերպությունների կողմից կարգով պահանջվող փաստաթղթերը չներկայացվելու դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում ապահովել պայմանագրերի միակողմանիորեն լուծումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ